Համատեղ հռչակագիր

Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև
ռազմավարական գործընկերության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռումինիան (այսուհետ՝ Կողմեր), վկայակոչելով 1994 թվականի սեպտեմբերի 20-ին Բուխարեստում Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև ստորագրված «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրը և համագործակցության տարբեր ոլորտներում կնքված բազմաթիվ երկկողմ համաձայնագրեր, վերահաստատելով իրենց ժողովուրդների միջև բարեկամության, համագործակցության և հստակ փոխըմբռնման պատմական ավանդույթները,

Ընդգծելով Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի ընդհանուր ցանկությունն ու վճռականությունը՝ ընդլայնելու և խորացնելու իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքականության, տնտեսության, պաշտպանության, անվտանգության, արդարադատության, մշակույթի, կրթության, էներգետիկայի, բնապահպանության, սոցիալական հարցերի և երիտասարդության հարցերով համագործակցության ոլորտներում,

հաստատելով իրենց գործընկերության հիմքում ընկած հիմնարար արժեքները, այդ թվում՝ ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության և լավ կառավարման ու դիմակայուն, միասնաբար կարգավորվող առևտրային համակարգի պահպանման համատեղ հանձնառությունը,

շարունակելով հավատարիմ մնալ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով և Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայով սահմանված նպատակներին և սկզբունքներին,

նպատակ ունենալով նպաստել տարածաշրջանային և միջազգային անվտանգությանը, կայունությանը և խաղաղությանը,

հաշվի առնելով Ռումինիայի դերը՝ որպես Եվրոպական միության և ՆԱՏՕ-ի անդամ, և Արևելյան հարևանության տարածաշրջանում կայունությունը, բարգավաճումը և ժողովրդավարական դիմակայունությունը խթանելու հարցում ընդհանուր շահագրգռվածությունը,

վկայակոչելով Հայաստանի Հանրապետություն-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված շրջանակը, Հայաստանի Հանրապետություն-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգով, ինչպես նաև Հայաստան-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովի համատեղ հռչակագրով սահմանված առաջնահերթությունները,

հաշվի առնելով Հայաստանի ձգտումը՝ ամրապնդելու իր քաղաքական, տնտեսական, անվտանգային և սոցիալական կապերը եվրոպական ընտանիքի և ժողովրդավարական պետությունների առավել լայն համայնքի հետ,

ձգտելով իրենց երկկողմ հարաբերությունները բարձրացնել որակապես նոր մակարդակի՝ ի բարօրություն երկու երկրների,

Կողմերը սույնով հայտարարում են Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև ռազմավարական գործընկերություն հաստատելու մասին:

Ռազմավարական գործընկերության շրջանակը

1. Քաղաքական երկխոսությունը, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը

1.1. Կողմերը կպահպանեն և կակտիվացնեն բարձր մակարդակի շփումներն իրենց գործադիր ու օրենսդիր մարմինների միջև:

1.2. Կողմերն իրենց արտաքին գործերի նախարարությունների միջև կանցկացնեն տարեկան քաղաքական խորհրդակցություններ՝ երկկողմ հարաբերությունների, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային և տարածաշրջանային հարցերի շուրջ տեսակետներ փոխանակելու և դիրքորոշումները համակարգելու նպատակով:

1.3. Կարևորելով Հայաստան-ԵՄ գործընկերության խորացումը՝ Կողմերը կանցկացնեն պարբերական ոլորտային խորհրդակցություններ երկկողմ ձևաչափով և Հայաստան-ԵՄ համագործակցության գործիքների շրջանակներում: Այս խորհրդակցությունները նպատակաուղղված կլինեն ԵՄ չափանիշներին Հայաստանի օրենսդրության մոտարկմանն աջակցելուն, Հայաստանի ինքնիշխանությունը և դիմակայունությունը բարձրացնելուն, Հայաստանում ժողովրդավարական հաստատությունները և օրենքի գերակայությունն ամրապնդելուն, Հայաստանում մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելուն, Հայաստանի տնտեսության, ինչպես նաև առևտրի բազմազանեցումը խթանելուն՝ ԵՄ շուկա ընդլայնված մուտքը դյուրացնելու և Հայաստանում եվրոպական ներդրումները խրախուսելու միջոցով:

1.4. Հիմք ընդունելով ընդհանուր սկզբունքներն ու արժեքները՝ Կողմերն ակտիվորեն կհամագործակցեն միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի, ՖՄԿ-ի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

1.5. Ռումինիան վերահաստատում է իր աջակցությունը 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում (ԿՇ) Միացյալ Նահանգների նախագահի ներկայությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի միջև ձեռք բերված համաձայնությունների իրագործմանը:

1.6. Ռումինիան վերահաստատում է իր ակտիվ աջակցությունը բոլոր համաձայնեցված քայլերի՝ ժամանակին իրականացմանը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում (ԿՇ) նախաստորագրված «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի ստորագրումը և վավերացումը՝ հիմնված միմյանց ինքնիշխանության և տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման և հարգանքի վրա՝ միջազգային իրավունքի և երկու երկրների կողմից կնքված համապատասխան միջազգային համաձայնագրերի դրույթներին համապատասխան:

2. Անվտանգությունը, դիմակայունությունը, արդարադատությունը և պաշտպանությունը

2.1. Կողմերն ընդունում են անվտանգության և պաշտպանության ոլորտներում համագործակցության ընդլայնման ներուժը և համաձայնում են ուսումնասիրել այդ ոլորտներում համագործակցության ամրապնդման հնարավորությունները:

2.2. Պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցությունը կզարգանա բարձր և աշխատանքային մակարդակի համաձայնությունների միջոցով:

2.3. Կողմերը կուսումնասիրեն պաշտպանական նշանակության արտադրանքի մշակման և արտադրության, ինչպես նաև արտահանման ուղղությամբ համագործակցության հնարավորությունները:

2.4. Կողմերը կհամագործակցեն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ անվտանգության ոլորտում համատեղ մարտահրավերներին դիմակայելու համար:

2.5. Կողմերը հաստատում են ազատ, բաց, անվտանգ և փոխգործունակ կիբեռտարածություն ապահովելու իրենց համատեղ հանձնառությունը:

2.6. Կողմերը կամրապնդեն կիբեռանվտանգության ոլորտում համագործակցությունը՝ իրականացնելով համատեղ նախաձեռնություններ, կիբեռանվանգության կառավարման և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ոլորտում առաջադեմ գործելակերպերի փոխանակում, ներառյալ՝ տեխնիկական համագործակցությունը և սպառնալիքների հայտնաբերման ու միջադեպերին արձագանքման վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը, կիբեռանվտանգության ոլորտում կրթության, հետազոտությունների և նորարարությունների շուրջ համագործակցությունը (օրինակ՝ համատեղ աշխատաժողովներ, մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, ինչպես նաև սիմուլյացիոն վարժանքներ):

2.7. Կողմերը կամրապնդեն իրենց համագործակցությունը կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաև կիբեռհանցավորության հակազդման ոլորտներում՝ իրականացնելով համատեղ նախաձեռնություններ, այդ թվում՝ տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ծրագրեր:

2.8. Կողմերն ընդունում են հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու հարցում փոխադարձ աջակցության կարևորությունը:

2.9. Կողմերը կուսումնասիրեն ամպային հաշվարկների և տվյալների վերլուծության ոլորտում համագործակցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով թվային փոխակերպման համար ամպային տեխնոլոգիաների օգտագործմանը:

2.10. Կողմերը կանցկացնեն պարբերական ոլորտային խորհրդակցություններ ապատեղեկատվությանը և Օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիաներին և միջամտություններին (ՕՏՄՄ) հակազդման, ռազմավարական հաղորդակցության, հանրային դիվանագիտության ոլորտներում և հարակից բնագավառներում՝ վերոնշյալ ոլորտներում փորձի փոխանակման և առկա խնդիրների լուծման համար:

2.11. Կողմերը կամրապնդեն ճգնաժամերի կառավարման և արտակարգ իրավիճակների արձագանքման ոլորտում համագործակցությունը՝ համատեղ նախաձեռնությունների և վերապատրաստումների, այդ թվում՝ կարողությունների զարգացման ծրագրերի, ինչպես նաև իրավասու մարմինների միջև համակարգման բարելավման միջոցով՝ բնածին և տեխնածին աղետների նկատմամբ դիմակայունությունը բարձրացնելու համար:

2.12. Կողմերը կխրախուսեն ժողովրդավարական հաստատությունների, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության, արդյունավետ կառավարման և հակակոռուպցիոն գործողությունների խթանման և ամրապնդման համար պատասխանատու իրենց գերատեսչությունների միջև կանոնավոր փոխանակումների իրականացումը: Կողմերը կամրապնդեն արդարադատության ոլորտում համագործակցությունը:

2.13. Կողմերը կընդլայնեն հաղորդակցությունը և խորհրդակցություններն իրենց համապատասխան նախարարությունների և ոլորտային գերատեսչությունների միջև՝ ինստիտուցիոնալ համագործակցությունը զարգացնելու և բազմոլորտ համագործակցության օրակարգն ընդլայնելու համար:

3. Տնտեսական և ենթակառուցվածքային համագործակցությունը

3.1. Կողմերը վերահաստատում են տնտեսական և առևտրային հարաբերությունների զարգացման ու ընդլայնման իրենց հանձնառությունը՝ առաջնահերթություն տալով այնպիսի ոլորտների, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, քիմիական արդյունաբերությունը, դեղագործությունը, ջրային ռեսուրսների և ջրային ենթակառուցվածքների կառավարումը, կենսաբազմազանությունը, հողերի կայուն կառավարումը, խելացի գյուղատնտեսությունը, վերականգնվող էներգիան, առողջապահությունը և զբոսաշրջությունը՝ միաժամանակ խրախուսելով փոխշահավետ ներդրումները:

3.2. Կողմերը կընդլայնեն համագործակցությունը՝ տարածաշրջանային և միջազգային առևտուրն ու տրանսպորտային կապակցելիությունը խթանելու համար՝ ԵՄ-ի «Գլոբալ դարպասներ» ռազմավարությանը և «ԹՐԻՓՓ» նախագծին համապատասխան՝ միաժամանակ ընդգծելով Հայաստանի՝ տարբեր տարածաշրջանների միջև կամուրջ դառնալու ներուժը, ինչպես առաջ է քաշվում «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությամբ:

3.3. Կողմերը կակտիվացնեն Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով երկկողմ միջկառավարական համատեղ հանձնաժողովի աշխատանքը, մասնավորապես՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ նախագծերի նախանշման նպատակով:

3.4. Կողմերը կխթանեն համագործակցությունը բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունների ոլորտում, այդ թվում՝ այնպիսի ոլորտներում համատեղ ձեռնարկությունների և հետազոտական նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են

կիսահաղորդիչները, արհեստական բանականությունը, ռոբոտաշինությունը և ամպային հաշվարկները, միաժամանակ խթանելով փոխգործակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների, սթարթափների և նորարարական էկոհամակարգերի միջև, այդ թվում՝ աքսելերատորների, ինկուբատորների և գործարար կապերի հաստատմանն ուղղված նախաձեռնությունների միջոցով:

3.5. Տնտեսական համագործակցությունը կխթանվի՝ ապահովելով համապատասխան տնտեսական շահառուների միջև փոխգործակցությունը, ներառյալ՝ մասնավոր հատվածի կազմակերպությունները, ներդրողները, սթարթափները, ազատ տնտեսական գոտիները, արդյունաբերական պարկերը, լոգիստիկ կենտրոնները, առևտրի պալատները, ինչպես նաև ներդրումներին և արտահանմանն աջակցող կառույցները: Այս համագործակցությունը կարող է խթանվել համատեղ գործարար առաքելությունների և թիրախային ներդրումային շնորհանդեսների միջոցով՝ նպատակ ունենալով ընդլայնել առևտուրը, խրախուսել ներդրումները, խթանել արդյունաբերական գործընկերությունը, առաջ մղել նորարարությունը և աջակցել կանաչ ու շրջանաձև տնտեսությանն անցմանը:

3.6. Կողմերը կխրախուսեն համատեղ մասնակցությունը միջազգային բարձր տեխնոլոգիական ցուցահանդեսներին և տեխնոլոգիական տոնավաճառներին, ինչպես նաև կկազմակերպեն համատեղ գործարար և տեխնոլոգիական համաժողովներ իրենց համապատասխան երկրներում՝ նպատակ ունենալով ներկայացնել իրենց կարողությունները, խթանել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և իրենց տեխնոլոգիական ոլորտներ ներգրավել գլոբալ ներդրումներ:

3.7. Կողմերը կընդլայնեն և կխթանեն համագործակցությունն ագրոբիզնեսի և ագրոպարենային ոլորտներում, ներառյալ՝ խելացի գյուղատնտեսությունը, ոռոգման տեխնոլոգիաները, ջերմոցային տնտեսությունների զարգացումը, սննդամթերքի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը, փաթեթավորումը, պահեստավորումը և սառը շղթայի լոգիստիկան, պարենային անվտանգությունը, ինչպես նաև արտահանման շուկաների համար հավելյալ արժեք ստեղծող արտադրությունը՝ կայուն ագրոպարենային արժեքային շղթաների ստեղծման նպատակով:

3.8. Կողմերը կամրապնդեն համագործակցությունը ստանդարտացման,

չափագիտության, հավատարմագրման, համապատասխանության գնահատման, սերտիֆիկացման, շուկայի վերահսկողության և տեխնիկական կարգավորման ոլորտներում, այդ թվում՝ եվրոպական շուկա հայկական ապրանքների և ծառայությունների մուտքն ապահովելու և երկու երկրների ձեռնարկությունների մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

3.9. Կողմերը կուսումնասիրեն թեթև արդյունաբերության և նոր տեխնոլոգիաների, այդ թվում՝ ավտոմոբիլային բաղադրիչների, էլեկտրական սարքավորումների, էլեկտրոնիկայի, մեքենաշինության և արդյունաբերական տեխնոլոգիաների արտադրության ոլորտում փոխգործակցության հնարավորությունները:

3.10. Կողմերը կհամագործակցեն առևտրի դյուրացումը և լոգիստիկ կապակցելիությունը բարելավելու ուղղությամբ, այդ թվում՝ մաքսային համակարգի արդիականացման, առևտրի ընթացակարգերի թվայնացման, պահեստավորման, բազմամոդալ տրանսպորտային լուծումների և մատակարարման շղթայի օպտիմալացման ոլորտներում փորձի փոխանակման միջոցով:

3.11. Կողմերը կխթանեն համագործակցությունը դեղագործության, բժշկական տեխնոլոգիաների և հարակից արտադրական ոլորտներում, այդ թվում՝ տեխնոլոգիաների փոխանցման, կանոնակարգման շրջանակի վերաբերյալ երկխոսության, գիտահետազոտական գործընկերությունների և ներդրումների խթանման միջոցով:

4. Էներգետիկան

4.1. Կողմերը երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերով կզարգացնեն էներգետիկայի ոլորտում սերտ համագործակցությունը՝ ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի, վերականգնվող էներգիայի, միջուկային էներգիայի և էներգետիկ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության խորացման հնարավորությունները:

4.2. Կողմերն ընդունում են Հայաստանի էներգետիկ կայունության ամրապնդման

կարևորությունը և այն դերը, որն այդ նպատակով կարող են ունենալ Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող տարածաշրջանային էներգետիկ նախաձեռնությունները:

4.3. Կողմերը կկազմակերպեն համատեղ խորհրդակցություններ կանաչ ջրածնին և վերականգնվող էներգիայի աղբյուրներին առնչվող նախագծերի, մասնավորապես՝ արևային և քամու էներգիային առնչվող նախագծերի մշակման վերաբերյալ: Նրանք կուսումնասիրեն մաքուր էներգիայի և էներգետիկ ռեսուրսների հետ կապված նորահայտ ոլորտներում, ինչպես նաև ընկերությունների միջև տեխնոլոգիաների փոխանակման շուրջ համագործակցության ընդլայնման հնարավորությունը:

4.5. Կողմերը, ունենալով միջուկային էներգիայի ծրագրեր, կուսումնասիրեն միջուկային էներգիայի ոլորտում փոխշահավետ համագործակցության և փորձի փոխանակման հնարավորությունը:

4.6. Կողմերը կփոխանակեն կարծիքներ էներգետիկայի և էներգետիկ ռեսուրսների ոլորտում պետական քաղաքականության և համագործակցության խթանման վերաբերյալ՝ նպատակ ունենալով ամրապնդել էներգամատակարարման անվտանգությունը և դիվերսիֆիկացնել էներգետիկ աղբյուրները և տրանսպորտային ուղիները՝ ավելի մաքուր և ավելի ներառական էներգետիկ համակարգերին անցում կատարելու նպատակով:

5. Կրթությունը, գիտությունը, առողջապահությունը, մշակույթը, սպորտը, երիտասարդությունը և զբոսաշրջությունը

5.1. Կողմերը վերահաստատում են երկու պետությունների համալսարանների, դպրոցների և այլ համապատասխան կրթական հաստատությունների ու գիտահետազոտական կազմակերպությունների միջև, այդ թվում՝ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (ԳՀևՓՄ) ոլորտում համագործակցության ընդլայնման իրենց հանձնառությունը՝ փոխանակման ծրագրերի, փոխադարձ ուսուցման նախաձեռնությունների խթանման և լավագույն գործելակերպերի

փոխանակման միջոցով:

5.2. Այս համատեքստում Կողմերը կխրախուսեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի համալսարանների միջև գործընկերությունների զարգացումը և կաջակցեն դրան՝ խրախուսելով պրոֆեսորադասախոսական կազմի, հետազոտողների և ուսանողների շարժունությունը, օգտվելով միջազգային և տարածաշրջանային համապատասխան համագործակցության այնպիսի շրջանակներով և ծրագրերով առաջարկվող հնարավորություններից, ինչպիսին, օրինակ, Էրազմուս+-ն է, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի շրջանակներում և տարածաշրջանային համագործակցության այլ ձևաչափերով իրականացվող նախաձեռնություններից:

5.3. Կողմերը կխթանեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում Ռումինիայի և Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և համալսարանների միջև գիտական գործընկերությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գիտահետազոտական համատեղ նախագծերին և դասախոսների/ուսանողների փոխանակմանը: Կողմերն ընդունում են Հայաստանի ակադեմիական քաղաքի՝ որպես գիտական համագործակցության և նորարարության կենտրոնի ներուժը, որը կնպաստի կրթության և հետազոտությունների ոլորտում ընդհանուր նպատակների իրագործմանը:

5.4. Կողմերը կձգտեն զարգացնել և ընդլայնել առողջապահության և հանրային առողջության ոլորտներում համապարփակ համագործակցությունը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով իրենց համապատասխան ազգային առողջապահական համակարգերի դիմակայունության ամրապնդմանը և բժշկական ծառայությունների որակի բարձրացմանը: Այս նպատակով Կողմերը թե՛ Հայաստանում և թե՛ Ռումինիայում կկազմակերպեն բժշկական տեխնոլոգիաների և բժշկության վերաբերյալ համատեղ համաժողովներ՝ շահագրգիռ անձանց տրամադրելով բարձր մակարդակի հարթակ կապերի հաստատման, նորարարական գաղափարների փոխանակման և ինստիտուցիոնալ համագործակցության խթանման համար:

5.5. Կողմերը կընդլայնեն համագործակցությունը մշակույթի ոլորտում՝ յուրաքանչյուր երկրի պատմության և մշակույթի վերաբերյալ փոխադարձ հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Նրանց համագործակցության հիմնական ուղղությունները կլինեն ստեղծարար ոլորտները և ժամանակակից մշակութային նախագծերը, միջազգային միջոցառումներին մասնակցությունը, համատեղ փառատոները և ցուցահանդեսները, ընդհանուր մշակութային ժառանգության հանրահռչակումը, գրական ստեղծագործությունների հրապարակումը, թարգմանությունը և տարածումը, մշակութային զբոսաշրջությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցությունը:

5.6. Կողմերը կընդլայնեն համագործակցությունը զբոսաշրջության ոլորտում՝ այդ թվում կազմակերպելով ներդրումային համաժողովներ և աջակցելով այնպիսի նախաձեռնությունների, որոնց նպատակն է բարձրացնել յուրաքանչյուր երկրի պատմության և մշակույթի վերաբերյալ փոխադարձ հանրային իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև խթանելով ուղիղ չվերթների իրականացումը:

5.7. Կողմերը կխթանեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցությունը, այդ թվում՝ բարձրագույն նվաճումների սպորտի, զանգվածային սպորտի, սպորտային բժշկության, սպորտային գիտության և սպորտի ֆեդերացիաների մասնագետների միջև համագործակցությունն ու փորձի փոխանակումը. նրանք կմասնակցեն երկու երկրներում անցկացվող միջազգային սպորտային միջոցառումներին և կկազմակերպեն համատեղ ուսումնամարզական հավաքներ ու մարզիչների համար նախատեսված սեմինարներ, ինչպես նաև փորձի փոխանակում և համագործակցություն՝ երիտասարդությանն առնչվող քաղաքականության ոլորտում:

5.8. Կողմերը կհամագործակցեն մարզիկների և մարզիչների զարգացման, երիտասարդական և զանգվածային սպորտի խթանման, հակադոպինգային գործունեության և սպորտային բարեվարքության ամրապնդման, ինչպես նաև սպորտային բժշկության և գիտության առաջմղման ուղղությամբ՝ փորձի փոխանակման և համատեղ նախաձեռնությունների իրականացման միջոցով:

6. Տիեզերական և տեխնոլոգիական ոլորտներում համագործակցությունը

6.1. Կողմերը կուսումնասիրեն տիեզերքի հետազոտման և արբանյակային տեխնոլոգիաների ոլորտում փոխգործակցության հնարավորությունը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով եվրոպական տիեզերական կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպական տիեզերական գործակալության հետ:

6.2. Կուսումնասիրվեն համատեղ տիեզերական ծրագրեր գործարկելու և Հայաստանի ու Ռումինիայի տիեզերական գործակալությունների միջև հնարավոր գործընկերություն հաստատելու հնարավորությունները՝ հաշվի առնելով այն միջազգային կազմակերպությունների՝ դիմակայունությանն առնչվող կարիքները, որոնց անդամ են Հայաստանը և Ռումինիան:

Սույն Համատեղ հռչակագիրը Կողմերի համար չի ստեղծում միջազգային իրավունքի համաձայն պարտադիր իրավական ուժ ունեցող պարտավորություններ կամ ֆինանսական հանձնառություններ: Սույն Համատեղ հռչակագիրն ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և ուժի մեջ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից որևէ մեկը դրա գործողությունը չի դադարեցրել՝ վեց (6) ամիս առաջ դրա մասին նախապես ծանուցելով:

Ստորագրված է _____ -ում 2026 թվականի _____ -ին, երկու բնօրինակից՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Ռումինիայի կողմից՝**